

**ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

**(մարմնի մասերի անվանումներով ԴՄ-ների
լեզվամյութի հիման վրա)**

20-րդ դարի 50-60-ական թվականներին, երբ դարձվածաբանությունը կայանում էր որպես լեզվի մասին առանձին գիտություն, լեզվաբանների ջանքերն ուղղված էին այս գիտաճյուղի բնութագրիչ հատկությունները, կարգերը և չափանիշները հաստատելու խնդրին:

Դարձվածային հոմանիշության և տարբերակայնության ոլորտում փորձեր էին արվում սահմանել դարձվածային միավորների (ԴՄ) կառուցվածքա-իմաստային փախակերկումների առանձնահատկությունները: Դարձվածային հոմանիշությունը լեզվաբանները սահմանում էին որպես ԴՄ-ների արտահատչական-իմաստային և ոճական առանձնահատկությունների փոխակերպումներ, իսկ տարբերակայնությանը բաժին էր ընկնում ԴՄ-ների արտաքին փոխակերպության դերը:

Այս խնդիրը ակտիվ քննարկումների առարկա է. այս խնդրին է նվիրվել Տուլայի գիտաժողովը և զեկուցումների ժողովածու/1/:

Շատ լեզվաբանների աշխատություններում այս կամ այն աստիճանով լուսաբանվել են դարձվածային տարբերակների և հոմանիշության զանազան խնդիրներ/2/: Նրանք առաջ են քաշում ԴՄ-ների տարբերակների և հոմանիշային դարձվածների տարբերության մի շարք չափանիշներ:

Նշանավոր դարձվածաբան Ն. Մ. Շանսկին դարձվածային տարբերակներ երևույթը առանձնացնում է դարձվածային հոմանիշներ երևույթից: Նա դարձվածային տարբերակներ է համարում «դարձվածը կազմող բաղադրիչների բառա-քերականական տարբերակները, որոնք նույնական են իրենց նշանակությամբ և իմաստային միաձուլության աստիճանով», իսկ հոմանիշներ՝ այն ԴՄ-ները, որ նշում են օբյեկտիվ իրականության միևնույն առարկան, սակայն միմյանցից տարբերվում են «իմաստային տարբեր նրբերանգներով, ոճական երանգավորմամբ և գործառության ոլորտով»/3/: Դարձվածային տարբերակների այսպիսի սահմանում են տալիս Յ. Յ. Ավալիանին և Լ. Ի. Ոռյզենզոնը՝ «Դարձվածային տարբերակները բնութագրվում են պատկերային կառուցվածքի և արտահայտչա-ոճական երանգավորման նույնությամբ, որն էլ

հմարավորություն է ընծեռում տարբեր համատեքստերում դրանց զուգահեռ գործելուն/4/:

Դարձվածային տարբերակների փոքր ինչ այլ մեկնաբանություն է տալիս Վ. Պ. Ժուկովը՝ «Այնպիսի բառային ձևափոխումները, որոնք միևնույն իմաստն են արտահայտում, սակայն տարբերվում են ոճական ոլորտում, մենք անվանում ենք դարձվածների տարբերակներ»/5/:

Պրոֆ. Ա. Սուքիասյանը հայերենում դարձվածների տարբերակներ է համարում «միայն բաղադրիչների միևնույն, հաստատուն կազմի առկայությամբ այս կամ այն բառի (բաղադրիչի) քերականական վարիացիաները, ինչպես նաև դարձվածի բաղադրիչը հանդիսացող բարբառային, փոխառյալ բառերն ու բառաձևերը զրականով փոխարինելու դեպքերը», իսկ դարձվածային հոմանիշները սահմանում է հետևյալ կերպ. «Հայերենում հոմանիշներ են կոչվում նույն հասկացությունն արտահայտող այն բառերը (դարձվածները), որոնք ունեն նույն կամ մոտ իմաստներ և միաժամանակ կարող են տարբերվել ոճական կիրառությամբ, հուզարտահայտչական գունավորմամբ, ինչպես նաև գործածականությամբ»/6/:

Խ. Բաղիկյանը նպատակահարմար է գտնում «միավորել դարձվածային հոմանիշներն ու նույնանիշները՝ դրանք կոչելով դարձվածային տարբերակներ, իսկ որպես տարբերակների մի առանձին տեսակ դիտել դարձվածային հոմանիշները»/7/:

Յ. Դ. Ապրեսյանը ճշմարտացիորեն գտնում է, որ դարձվածային տարբերակները, ի տարբերություն հոմանիշների, կարող են միմյանց փոխարինել գործածության ցանկացած պայմաններում: Նա հաստատում է, որ բացի դրանից, տարբերակները պետք է համընկնեն իմաստների քանակով, ձևով և որակով/8/:

Մենք կարծում ենք, որ դարձվածային տարբերակները, ի տարբերություն հոմանիշների, կապված են մեկ պարտադիր ընդհանուր բառային բաղադրիչով. մյուս բաղադրիչները կարող են տարբեր լինել: Այլ խոսքերով, դրանք միևնույն միավորի՝ անփոփոխակի (ինվարիանտ) ձևափոխված ձևերն են, որ տարբերվում են առանձին բաղադրիչներով, սակայն դարձվածի ընդհանուր իմաստը և քերականական կաղապարը հիմնականում պահպանվում է: Բացի այդ, մեր կարծիքով, ի տարբերություն դարձվածային հոմանիշների, դարձվածային տարբերակները այնպիսի միավորներ են, որոնք իրարից չեն տարբերվում ոչ իմաստային, ոչ ոճական առումներով:

Դարձվածային տարբերակների որոշարկման ժամանակ մենք առանձնացրել ենք հետևյալ չափանիշները.

- Տարբերակներ են այնպիսի ՂՄ-ները, որոնք մեկը մյուսից առաջացել են տարբեր բառային կամ քերականական փոփոխությունների արդյունքում:
- Դարձվածային տարբերակները պետք է նշանակեն միևնույն դեմոտատը՝ առանձնանալով միայն խոսքի առանձին ոճերի իրենց վերաբերությամբ և ոճական երանգավորման աննշան տարբերությամբ (սակավ դեպքերում):
- Դարձվածային տարբերակները պետք է ունենան ընդհանուր բառային բաղադրիչ, թեպետ այսպիսի նմանություն հնարավոր է նաև հոմանիշների դեպքում, սակայն այնտեղ դա պարտադիր ընդհանրություն չէ:

Հարկ է նշել, որ ի տարբերություն դարձվածային հոմանիշների, դարձվածային բոլոր տարբերակներին հատուկ է հավասար հուզական գունավորում, այլապես տարբերակները իրարով փոխարինվել չէին կարող:

Այսպես, դարձվածային տարբերակները կարող են լինել բառային (լեքսիկական), որոնք իրենց հերթին լինում են բայական, գոյականական, ածականական և այլն, քերականական, որոնք տարբերվում են քերականական ձևերով (հոլովման, հոլովի և կապի, թվի, բայական սեռի, ժամանակների և եղանակների տարբերություններով և այլն, անգլերենում նաև հայերենի հոլովների իմաստն արտահայտող նախդիրների փոփոխությամբ և շարադասական տարբերակներ), կարող են լինել հեղինակային տարբերություններ և այլն: Ա. Վ. Կունինը նշում նաև քանակային (քվանտատիվ) դարձվածային տարբերակներ, երբ դարձվածի բաղադրիչային կազմը համալրվում է մեկ այլ բառով, կամ ընդհակառակը՝ զեղչվում է որևէ անդամը/9/:

Հայերենում դարձվածային բաղադրիչներ առաջանում են նաև գրական բաղադրիչը բարբառայինով կամ փոխառյալ բաղադրիչով փոխարինելու դեպքում, անգլերենում դարձվածային տարբերակներ են համարվում նույն ՂՄ-ի բրիտանական և ամերիկյան տարբերակները:

Այժմ քննենք այս երևույթները մարմնի մասերի անվանումներով ՂՄ-ների լեզվանյութի հիման վրա՝ հայերենում և անգլերենում:

Դարձվածների բառակազմական տարբերակները, որոնք տարբերվում են միմյանցից բաղադրիչներից մեկի վերջածանցների առկայությամբ կամ բացակայությամբ (նաև ածականների համեմատության աստիճաններով) բնորոշ չեն հայերենին և անգլերենին: Բառակազմական տարբերակների բացակայության պատճառներից մեկը, թերևս, դարձվածների գործածության ավանդական բնույթն է: Մյուս պատճառը ընդհանրապես յուրաքանչյուր լեզվի

և մասնավորապես կոնկրետ լեզվի մեծաթիվ դարձվածներին բնորոշ դիմա-
մեղեդային, հանգի և հնչյունների ներդաշնակության մեջ է:

Դարձվածների բառային (լեքսիկական). տարբերակներ: Բառային տարբերակներ են կոչվում ԴՄ-ների այն տարբերակները, որոնք նույնական են իրենց նշանակությամբ, ոճական և շարահյուսական գործառնությունով և ունեն ընդհանուր բառային անփոփոխակ՝ մասամբ տարբեր կազմի դեպքում: Երկու լեզուներում էլ լայնորեն տարածված են այն դարձվածային տարբերակները, որ կազմվում են բառային միջոցներով՝ մեկ բաղադրիչի փոխարինումը հոմանիշային (կամ ոչ հոմանիշային) տարբերակով, որ երբեմն աննշան իմաստային փոփոխություններ կարող է մտցնել դարձված: Եթե դարձվածային հոմանիշներում բառային փոփոխությունները (փոխարինումները) ավելի շատ են ազդում ընդհանուր իմաստի վրա, քանի որ դրանք միշտ հենվում են դիստորիբուտիվ կապերի վրա (որոշ դեպքերում փոփոխելով դրանք) և կարող են ներմուծել լրացուցիչ կամ ինչ-որ չափով փոփոխված երանգներ/10/, ապա դարձվածային տարբերակներում այդպես չէ:

Բառային տարբերակների դեպքում կարող են փոփոխվել բայերը, գոյականները, ածականները, մակբայները, կապերը, շաղկապները և նախդիրները (նախդիրների փոփոխության դեպքեր կարող են լինել անգլերեն լեզվում): Հմարավոր են նաև համակցված տարբերակներ, երբ միևնույն ԴՄ-ում միաժամանակ փոփոխվում են տարբեր խոսքի մասեր և ծառայողական բառեր:

1. Գոյականական տարբերակներ: Ժամանակակից հայերենում լայն տարածում ունեն դարձվածային այն տարբերակները, երբ իրար փոխարինող գոյականները հոմանիշներ են՝ աչ ձեռք (թև); արյան կանչ(ծայն); բերանին կապ (կողպեք, փակ, սանձ) դնել; երկու ոտքը մի մաշիկ (կոշիկ) դնել; նոթերը (հոնքերը) կիտել; մատը վերքի վրա (ցավոտ տեղին) դնել; ականջները վարձու(փոխ) տալ; ականջի ծայրով(պոչով) լսել; աչքերից կրակ(կայծեր) դուրս գալ (ժայթքել, թափվել) և այլն: Անգլերենում դրանք ավելի սակավաթիվ են՝ bag(rack) of bones- վտիտ, չափազանց նիհար; turn somebody's brain(head)- մեկի գլուխը պտտեցնել և այլն:

Հայերենում բավական տարածված են նաև կապերով և կապական բառերով և առանց դրանց կազմվող բառային տարբերակները՝ հոգին բուռը հավաքել/հոգին բռան մեջ հավաքել; գլուխը բարձին դնել/գլուխը բարձի վրա դնել; սրտին մի թիզ յուղ քսել-սրտի վրա մի թիզ յուղ քսել; ձեռքից հոտ քաշել-ձեռքի միջից հոտ քաշել և այլն (քանի որ կապերը և կապական բառերը միայն քերականական իմաստ ունեն, մենք այս դարձվածային տարբերակները դասում ենք ոչ թե քանակային տարբերակների շարքը, այլ համարում ենք գոյականական բաղադրիչի փոփոխության տարբերակներ):

Երկու լեզուներում էլ առավել տարածված են ԴՄ-ներում գոյական-բաղադրիչի ոչ հոմանիշային գոյականով փոխարինումները՝ սիրտ (թև, ոգի) առնել, ծալը (խելքը, տախտակը, կուտը) պակաս; ականջով փոշի(բան, մոխիր) չարժե և այլն: Անգլերենում keep one's hair (shirt, wool) on-հանդարտություն պահպանել, չբորբոքվել; turn something over in one's head(mind)-խորհել, երկար մտածել մի բանի մասին; hang on somebody's lips(words)- ուշադիր և հիացնումնքով լսել մեկի խոսքերը; hide one's head(face)-գլուխը շրջել, դեմքը թաքցնել(ամոթից և շփոթմունքից); hang by a hair(thread)-մազից, թելից կախված լինել(ծայրահեղ վատ դրության մեջ լինել); show one's hand(cards)-խաղաթղթերը բացել, մտադրություններն ի հայտ բերել; be knee- (neck) deep in-մինչև կոկորդը խրված լինել մի բանի մեջ և այլն:

Հարկ է նշել նաև, որ ԴՄ-ի մարմնի մասի անվանումով գոյականական բաղադրիչը կարող է փոխարինվել ինչպես այլ մարմնի մաս անվանող գոյականական բաղադրիչով, այնպես էլ բոլորովին այլ թեմատիկ խմբի պատկանող գոյականով (տես վերը բերված օրինակները):

2. Բայական տարբերակներ: Երկու լեզուներում էլ առավել մեծ թիվ են կազմում ԴՄ-ների այնպիսի տարբերակները, որոնք զանազանվում են բայ-բաղադրիչներով: Այստեղ նույնպես իրար փոխարինող բայերը կարող են լինել հոմանիշային և ոչ հոմանիշային բայեր: Երկու լեզուներում էլ ավելի մեծ տարածում ունեն հոմանիշային բայերով տարբերակները՝ երես դարձնել (թեքել); թուրը ցամաքել(չորանալ); ականջը(ականջները) քաշել(ծգել); ատամները ջարդել(փշրել); ատամները հաշվել(համրել); աչքը ելնել(դուրս գալ); հոգին ելնել(դուրս գալ) (վերջին երկու ԴՄ-ներում միաբաղադրիչ բայը փոխարինվել է բայական հարադրությամբ) և այլն: Անգլերենում shut (close) one's eyes to something-աչք փակել մի բանի վրա; cry (weep, sob) one's heart out-դառը արտասվել; move(stir, touch) somebody's heart-ստիպել մեկի սիրտը թրթռալ; poke (stick) one's nose into somebody's affairs-քիթը մեկի գործերի մեջ խոթել, fall(land) on one's feet-նեղ վիճակից հաջողությամբ դուրս պրծնել, ջրից չոր դուրս գալ և այլն:

Ավելի քիչ են հանդիպում բայ-բաղադրիչը ոչ հոմանիշային բայերով փոխարինող տարբերակային ԴՄ-ներ՝ մատը մատին չտալ/չխփել; արյունը գլուխը տալ/խփել, գլխին ջուր մաղել(լցնել); ականջ ծակել(սղոցել); ականջ անել(դնել); և այլն: Անգլերենում cool(kick) one's heels- իզուր սպասել մի բանի; find(get, have, know, take) the length of somebody's foot-բացահայտել մեկի մտադրությունը; give(lend) an ear to somebody/something-մեկին/մի բանի ականջ դնել և այլն: Հանդիպում են նաև տարբերակներ, որոնցում բայ-բաղադրիչը կարող է փախարինվել ինչպես հոմանիշային, այնպես էլ ոչ

հոմանիշային բայով՝ խելքը թռցնել(կորցնել, գլխից գնալ), անգլերենում not to lift (raise, stir, turn) a finger-մատն անգամ չշարժել, չօգնել և այլն:

Ածականական տարբերակներ: ՂՄ-ների կազմում ածականները ավելի սակավ են փոփոխվում և տարբերակներ ստեղծում՝ սառը (պաղ) ջրտինք տալ վրան; արյունը տաք (քաղցր): Հայերենում թվականով արտահայտված որոշիչը կարող է փոխարինվել ածականով՝ երկու (զույգ) աչքիս վրա և այլն:

Անգլերենում նույնպես տարածված չեն ածականի փոփոխությամբ ՂՄ-ները՝ laugh on the wrong(other) side of one's face-ծիծաղելուց հետո լաց լինել և այլն:

Անգլերենում հնարավոր են նաև նախդիրների զանազանությամբ՝ a millstone about(round) one's neck-ուսերին ծանր բեռ; hang on(upon) somebody's lips(words)- ուշադիր և հիացմունքով լսել մեկի խոսքերը; put words in(into) somebody's mouth-մեկին վերագրել մի բան, ինչ նա չի ասել; at heart-in one's heart-հոգու խորքում (վերջին դարձվածը տարբերակ ունի միայն իր առաջին հոգու խորքում իմաստով (այս ՂՄ-ի տարբերակը կարելի է նաև քանակային տարբերակ համարել, քանի որ հնարավոր է նաև բաղադրիչային կազմի համալրում at heart-in one's heart (of hearts) դարձվածային տարբերակներ: Կամ՝ նախդիրը փոխարինվում է համադասական and շաղկապով՝ be hand in (and) glove-մտերիմ, սրտակից բարեկամներ լինել, համատեղ գործել, փոփոխվում են փոխադարձ դերանունները՝ cut each other's (one another's) throats-իրար կոկորդ կրծել, դասական թվականը փոխարինվում է ածականով՝ head first(foremost)-գլխավայր և այլն: Անգլերենում տարածված են նաև հոդերով տարբերակված ՂՄ-ները: Այստեղ անորոշ հոդը կարող է փոխարինվել որոշյալ հոդով, ինչպես նաև որոշյալ հոդը՝ one's անորոշ դերանունով և հակառակը, կարող է լինել հոդով և առանց հոդի տարբերակ՝ be up to the(one's) chin(ears, elbows, eyes) in-ոտից-գլուխ թաղված, խրված լինել (պարտքի մեջ); have (keep) an(one's) ear(s) to the ground-գործին տեղյակ լինել, հասարակական կարծիքը հաշվի առնել; lift(raise) one's(the) hand against somebody-մեկի վրա ձեռք բարձրացնել; plain as (the) day (nose) on your face-միանգամայն պարզ, ակնհայտ և այլն (բոլոր այս ՂՄ-ները կարող են համարվել նաև բառային (բայական և գոյականական), քերականական, քանակային, ինչպես նաև միևնույն ՂՄ-ում տարբեր անդամների զանազանությամբ համակցված տարբերակներ):

Համակցված (երբ ՂՄ-ում փոփոխվում են տարբեր խոսքի մասերը) տիպի դարձվածային տարբերակներ են, հայերենում՝ բզի(մեխի) ծայրին(գլխին) բռնկեցրով խփել; գլխին պաղ (սառը) ջուր լցնել (մաղել); աչքերից կրակ(կայծեր) դուրս գալ (ժայթքել, թափվել); անգլերենում betray (display,

show) the cloven foot (hoof)- ցուցադրել իր չար էությունը, սատանայական բնավորությունը; hang on(upon) somebody's lips(words)- ուշադիր և հիացմունքով լսել մեկի խոսքերը և այլն:

Բացառիկ դեպքերում հնարավոր է մաս բոլոր բաղադրիչների փոփոխում՝ ականջը(ականջները) բուրդ (բամբակ) դնել(խցկել, կոխել); անգլերենում՝ crook (lift) the elbow (the little finger)-հարքել և այլն:

Ա. Վ. Կունինը դարձվածային տարբերակներ է համարում մաս անգլերենին հատուկ *one (one's), somebody (somebody's) և something* (որոնք մաս անվանում է փոփոխելի որոշարկիչներ՝ ակտերնամսներ) դերանուններով ՂԱ-ները, որոնցում այս փոփոխելի որոշարկիչները համատեքստի պահանջով փոխարինվում են գոյականով, այլ դերանունով կամ բառակապակցությունով՝ the apple of one's eye-աչքի լույս, սիրելի մարդ; a chip on one's shoulder (Am.)-կռվելու ցանկություն; put somebody's nose out (of joint)-մեկի քիթը տրորել; give somebody the cold shoulder-մեկին սառը ընդունելություն ցույց տալ; have (keep) one's wits about one-իրեն չկորցնել, աչալուրջ լինել; throw something upon somebody's hands-մի բան թողնել մեկի պատասխանատվությանը, put (get) somebody's/one's back up-բարկացնել/բարկանալ և այլն:

Քանակային տարբերակներ են համարվում նույն ՂԱ-ի լրիվ և կրճատված ձևերը՝ արյունը ցամաքել-արյունը երակներում ցամաքել; գլխին շան լափ լցնել-գլխին լափ լցնել; թուքը ցամաքել-թուքը բերանում ցամաքել; սրտին կաչել-սրտի (նուրբ)լարերին կաչել; քրտինք տալ վրան-սառը քրտինք տալ վրան և այլն: Այս ՂԱ-ներում բաղադրիչի հավելումը հիմնականում որևէ հավելյալ, նրբերանգային խմաստ է հաղորդում ՂԱ-ին: Օրինակ, եթե սրտին դիպչել ՂԱ-ը նշանակում է մեկին նեղացնել, վիրավորել, ցավ պատճառել, ապա սրտի նուրբ լարերին դիպչել ՂԱ-ում կա մի նրբիմաստ՝ մեկի ամենացավոտ տեղին կաչել, վիրավորել՝ հիշեցնելով դիմացինի համար մի լավ, հաճելի, սրտամոտ բան:

Անգլերենում քանակային ՂԱ-ների օրինակներ են from (the bottom of one's) heart- սրտի խորից, անկեղծորեն; in one's hearts (of hearts)- հոգու խորքում; be (like/as) wax in somebody's hands-մեկի ձեռքում խաղալիք լինել; beat one's head against a (brick/stone) wall- գլուխը պատին տալ՝ անհնարինը իրականացնելու համար; save one's (own) skin- (սեփական) մորթին ազատել, կաշին փրկել; open(up) somebody's eyes- մեկի աչքերը բացել, մոլորությունից ազատել; stand on one's own (two) feet-անկախ, ինքնուրույն լինել, նյութական կախվածություն չունենալ; hit the (right) nail on the head-ճիշտ նշանակետին խփել; (all) skin and bone-չափազանց միհար, վտիտ և այլն: Կա մաս համեմա-

տական ՂՄ-ների բառա-քանակային տարբերակը՝ (as) sulky (surely) as a bear with a sore head=(as) sulky (surely) as a bear-սարսափելի զայրացած լինել:

Անգլերենում բաղադրիչների հավելումը հիմնականում իմաստային փոփոխություններ առաջ չի բերում, պարզապես ավելի է հստակեցնում, ուժգնացնում ասելիքի ազդեցությունը:

Դարձվածների քերականական տարբերակները մեկ կամ մի քանի ընդհանուր բաղադրիչ ունեցող ՂՄ-ներն են, որոնք տարբերվում են քերականական ձևերով (հոլովման, հոլովի և կապի, թվի, բայական սեռի, ժամանակների ու եղանակների): Քերականական տարբերակների շարքում հայերենում և անգլերենում առավել տարածված են գոյականի եզակի կամ հոգնակի թվով բաղադրիչներով դարձվածային տարբերակները, որոնցում թվի, հոգնակիության իմաստը ոչ մի իմաստային փոփոխություն չի առաջացնում ՂՄ-ում՝ ոտքը (ոտքերը) ընկնել; աչքին (աչքերին) չհավատալ; բերանի ջուրը (ջրերը) գնալ, աչքին (աչքերին) թող փչել; արյունը աչքը (աչքերը) առնել; աչքով (աչքերով) չափել; ականջը (ականջերը) բուրդ բամբակ խցկել(ղնել, կոխել); ակամջը(ակամջները) սրել և այլն:

Անգլերենում նույնպես ՂՄ-ի գոյական բաղադրիչի թվի փոփոխությունը իմաստային ոչ մի տարբերություն առաջ չի բերում՝ keep one's ear(s) to the ground-գործին տեղյակ լինել; be at one's wit's (wits') ends-մեծ տարակուսանքի մեջ լինել; look somebody in the eye(s)-պարզ երեսով նայել մեկին; skin and bone(s)-կաշի և ոսկոր և այլն:

Հայերենում հանդիպում են նաև հոլովական տարբերակները՝ արյունը գլուխը տալ-արյունը գլխին տալ; բերանի ջուրը գնալ-բերանից ջուր գնալ (որոշյալ հոդի փոփոխությամբ): Անգլերենում հանդիպում է հոլովական տարբերակի մի տեսակ, երբ սեռական հոլովով դրված գոյական որոշիչը փոխարինվում է ետադաս նախդիրա-անվանական որոշիչով՝ Achilles' heel-the heel of Achilles-աքիլեսյան գարշապար (մարդու խոցելի տեղը): Դիրքային փոփոխությունները հատուկ են անգլերենի շարադասությանը. նախադաս ածականական որոշիչը նույնպես կարող է փոխարինվել ետադաս նախդիրա-ածականական որոշիչով՝ a stony heart-a heart of stone-քարե սիրտ և այլն: Սեռական հոլովով դրվող նախադաս գոյականը կամ ստացական հոլովով դրվող նախադաս դերանունը փոխարինվում են ետադաս նախդիրա-անվանական բաղադրիչով՝ be at somebody's back- be at the back of somebody-մեկին կրնկակոխ հետևել, play into somebody's hand-play into the hands of somebody-խաղալ ի օգուտ մեկի; strengthen somebody's hand(hands)-strengthen the hand(hands) of somebody-մեկին ուժ տալ և այլն(այստեղ իրականանում է բառային-շարահյուսական տարբերակում):

Հայերենում հանդիպում են նաև հարցական-ժխտական տարբերակներ, երբ ՂՄ-ի բայ-բաղադրիչը մի դեպքում համոզե է գալիս հարցական, մյուս դեպքում ժխտական հնչերանգով (սրանք հիմնականում հաղորդակցական տիպի ՂՄ-ներ են և իմաստային որևէ տարբերությամբ չեն առանձնանում)՝ Քիթը սրբելու ժամանակ չունի-քիթը սրբելու ժամանակ ու՞նի, որ...; դրական-բացասական տարբերակներ, երբ բայ-բաղադրիչի դրական- բացասական հակադրությունը չեզոքանում է (մարմնի մասերի անվանումով կարելի է, թերևս, երկու այդպիսի ՂՄ վկայակոչել)՝ մի թիզ լինել(չլինել)- շատ փոքր լինել; երեսով (աներես) լինել-համառ, ամրաճակատ լինել; Տարածված են նաև ՂՄ-ների այնպիսի տարբերակներ, երբ սեռական հակադրությունը իմաստազատիչ դեր չի խաղում ՂՄ-ի համար. վերանում է ա/ անցողական-անանցողական հակադրությունը՝ աչքերը քոռանալ (քոռացնել)-շատ լաց լինել, նաև շատ կարդալուց աչքերը տկարացնել; մեջքը պնդանալ(պնդացնել)- հզոր պաշտպան ձեռք բերել, նաև՝ հարստանալ; բ/ ներգործական-չեզոք սեռերի հակադրությունը՝ երեսը գոմշի կաշի անել(լինել)- շատ երես առնել; երեսը թուք ու մուր բերել(գալ)-անարգվել; գ/ կրավորական Վ/ ցուցիչը իմաստազատիչ դեր չի խաղում՝ աչքերը չռել (չռվել)-զարմանալ; լեզուն պտտել(պտտվել)-կարողանալ որևէ բան ասել և այլն:

Անգլերենում հանդիպում են ՂՄ-ների հետևյալ տարբերակները. բարդ խնդիր երկակի ստորոգծի կապով ՂՄ-ի տարբերակ է դառնում սովորական բայական ՂՄ-ը՝ make somebody's hair curl-curl somebody's hair-մեկին ապշեցնել, ցնցել և այլն:

Երկու լեզուներում էլ հանդիպում են նաև բառա-քերականական տարբերակներ, երբ կա և բառ-բաղադրիչի փոփոխություն և քերականական ձևափոխություն՝ ականջը(ականջները) բուրդ (բամբակ) դնել (խցկել, մտցնել, կոխել); անգլերենում come to somebody's ear(ears)=come to the ear (ears) of somebody=reach somebody's ears=reach the ears of somebody-հասնել մեկի ականջին(ականջներին); be in the clouds-have one's head in the clouds-ամպերում սավառնել, ցնորքներով տարվել(վերջին ՂՄ-ում առկա է նաև ՂՄ-ի կառուցվածքային մոդելի փոփոխություն):

Առածները և ասացվածքները նույնպես կարող են ունենալ տարբերակներ: Հայերենում այդպիսի ՂՄ-ներ կարելի է համարել տարբեր գավառների և բարբառների պատկանող միևնույն ասացվածքի կամ առածի տարբերակները՝ Շան հետ ընկերացիր՝ փետը ձեռիցդ մի գցիր (Ղարաբաղ)=Գիլի հետ ընկերացիր՝ դազանակդ ձեռիցդ մի գցիր (Աշտարակ); կամ՝ Գլուխը հաստ՝ ծուծը քարակ (Աստանա)=Վերնատունը մարդ չկա (Ալաշկերտ)=Վերնատունը դատարկ է (Շիրակ)= Վերին հարկը պարապ է (Արաբկիր) և այլն: Անգլերենում այդ

տարբերությունները հիմնականում կառուցվածքային են՝ one's hands are full=one has(got) his hands full-մինչև կոկորդը խրված լինել՝ աշխատանքի մեջ; one's heart is in the right place=one has(got) his heart in the right place-ունենալ բարի նպատակներ և այլն: Հանդիպում են նաև բառային՝ one's heart came (leaped) into one's mouth-սիրտը ճաքեց և բառա-քերականական տարբերակներ՝ crows do not pick crow's eyes out=hawks will not pick hawks eyes out-ազդավը ազդավի աչքը չի հանի և այլն:

Հայերենում դարձվածային տարբերակների համեմատաբար մեծ խումբ են կազմում այն կառույցները, որոնց բաղադրիչները մի դեպքում հանդես են գալիս գրական, մյուս դեպքում բարբառային ուղորտների բառերով: Բնականաբար գրական բաղադրիչներով կազմվածները հիմնականում կիրառելի են գրական, հրապարակախոսական ոճերում, իսկ բարբառայինները՝ խոսակցական և բարբառային ոճերում՝ բերանը փակել//բերանը ծեփել; գլուխը տանել //զահլան տանել; վիզը ծռել//շլինքը ծռել; ծնոտը կախել//չանքն կախել; կոկորդից բռնել//բկից բռնել; աքիլեսյան գարշապար//աքիլեսյան կրունկ և այլն: Կարող են նաև բարբառային բայերը փոխարինվել խոսակցականով կամ բարբառայինով՝ քիթը ցցել//քիթը տնկել; թիկունքից հարվածել//թիկունքից զարկել; խելքը գլուխը հավաքել//խելքը գլուխը ժողովել և այլն:

Անգլերենում հանդիպում են նույն ԴՄ-ի բրիտանական և ամերիկյան տարբերակները, որոնց իմաստային որևէ տարբերությամբ չեն առանձնանում և ոճական մրբերեցներ հանդես չեն բերում՝ carry(hold) (up) one's head high=(Am.) hold one's head up-գլուխը բարձր քայլել, հպարտ լինել; skeleton in the cupboard=(Am.)skeleton in the closet- ընտանեկան սարսափելի գաղտնիք; make somebody's hair curl=(Am.) curl somebody's hair-մեկին ապչեցնել, ցնցել և այլն:

Եվ այսպես, կարելի է համզել հետևյալ եզրակացություններին.

1. Դարձվածային տարբերակները շատ տարածված երևույթ են երկու լեզուներում էլ: Ուսումնասիրված 2000 հայերեն ԴՄ-ներից տարբերակներ ունեն 530-ը, այսինքն, մոտ 27%-, իսկ անգլերեն 2200 ԴՄ-ներից՝ 450-ը, այսինքն մոտ 20%-ը:

2. Որոշ դարձվածներ կարող են ունենալ երկուսից մինչև վեց տարբերակներ:

3. Դարձվածային տարբերակների շարքում առանձնանում են նախ և առաջ բառային և քերականական տարբերակները: Դարձվածային տարբերակներում գոյական անվան տարբերակները ավելի քիչ են հանդիպում, քան բայական տարբերակները: Կարող են հանդիպել տարբերակներ, ուր փոփոխված են թե բայական, թե անվանական բաղադրիչները:

4. Դարձվածային միավորները կարող են միաժամանակ ունենալ ինչպես բառային, այնպես էլ քերականական տարբերակներ: Դրանք կարելի է անվանել բառա-քերականական տարբերակներ:

5. Դարձվածային տարբերակների մեծ մասը ունի մեկ բաղադրիչի տարբերություն, սակայն կարող են լինել նաև մի քանի բաղադրիչի տարբերություններ:

6. Հայերենում հանդիպում են քերականական տարբերակների ավելի շատ տարատեսակներ, քան անգլերենում: Անգլերենում ավելի շատ են բառային-ծարանական-շարահյուսական տարբերակները:

Գրականություն

1. Проблемы устойчивости и вариантности фразеологических единиц. Материалы межвузовского симпозиума, Тула, 1968).
2. Стб' Архангельский В. Д. Вариации лексического состава устойчивых фраз в русской фразеологии. Сб. 2-ая научно-методическая конференция Северо-Кавказского зонального межвузовского объединения кафедр русского языка. Вопросы изучения русского языка (тезисы докладов). Ростов-на-Дону, 1960; Жуков В. П. О лексических вариантах фразеологизмов. Уч. Зап. Гурьевского гос. Пед. Ин-та. Вып. 2. Серия историко-фразеологическая. Уральск. 1962; Русская фразеология, М., "ВШ", 1986, стр. 166-178; Авалиани Ю.Ю., Ройзензон Л. И. О разграничении сининимии и вариантности в области фразеологических единиц (к постановке вопроса)-Сб.9.координационное совещание по вопросам фразеологии. Тезисы докладов. Баку. 1964; Супрун. А. В. Варианты глагольных идиом (на материале испанского языка), Сб. Методы сравнительно-сопоставительного изучения в сов. романских языков. М., "Наука", 1966; Коваленко Т. И. К вопросу о вариантах и синонимах глагольных фразеологизмов в сов. русском языке. Уч. Зап. МОПИ им. Н. К. Крупской. Том 160. Русский язык. Вопросы русской фразеологии. Вып. 11. М., 1966; Аяндю Р. А. Лексические варианты глагольных фразеологических единиц в сов. франц. языке. АКД. Воронеж, 1965; Эшанкулов А. У. К вопросу о синонимии глагольных аналитических слов (на материале разнотесистемных языков). В сб. Вопросы лексикологии, лексиграфии и стилистики. Вып. 291. Самарканд, 1976; А. Г. Назарян. Фразеология современного французского языка. М., "ВШ", У. У. Սուրբապայան, Հոմանիչները ժամանակակից հայերենում, Ե., 1974; Վ. Սոսյան, Հայոց լեզու, 1 հ., Ա արակ: Ս Արրահամյան. Հայոց լեզու. Բառ և խոսք:
3. Шанский. Н. М. фразеология современного русского языка. Учебное пособие для ВУЗ-ов, М., "ВШ", 1985, с. 50.
4. Авалиани Ю.Ю., Ройзензон Л. И. О разграничении сининимии и вариантности в области фразеологии.- Сб. Вопросы фразеологии и составления фразеологических словарей. Баку. 1964. с. 72.
5. Жуков В. П. Русская фразеология, М., "ВШ", 1986, стр. 166-178.
6. Ա. Ս. Սուրբապայան, Հոմանիչները ժամանակակից հայերենում, Ե., 1974, էջ 259:
7. Խ. Բաղիկյան, Դարձվածային ոճաբանություն, Ե., 2000, էջ 80:
8. Апресян Ю. Д. фразеологические сининимии типа "глагол+существительное» в совр. английском языке. АКД. М., 1956.
9. Кунин А. В. Фразеология современного английского языка. М., 1972, стр. 98.
10. Авалиани Ю.Ю., Ройзензон Л. Э. նշված աշխատությունը, էջ 74: